ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանի մոտ 2019 թվականի հունիսի 21-ին կայացած խորհրդակցության

Մասնակցությամբ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարության տեղական ինքնակառավարման
քաղաքականության վարչության պետ Ա.Գիլոյանի

ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական Ն.Պետրոսյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների
ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարների

Օրակարգում

ՀՀ Արմավիրի մարզում համայնքների միավորման նախնական քննարկումների վերաբերյալ

/Հ. Մաթևոսյան-ՀՀ Արմավիրի մարզպետ/

Օրակարգային հարցի առնչությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը խորհրդակցության մասնակիցներին տեղեկացրեց, որ խորհրդակցության հիմնական նպատակն է քննարկել ՀՀ Արմավիրի մարզում համայնքների խոշորացման գործընթացը: Հ.Մաթևոսյանը ներկայացնելով կառավարության մոտեցումը խոշորացման գործընթացին՝ նշեց, որ այն չունի քաղաքական գործոն և այս գործընթացի նպատակը պետության կողմից ռեֆորմների իրականացումն է՝ ընդգծելով ընդհանուր հատման տարածք ունենալու կարևորությունը, ենթակառուցվածքների նշանակությունը, մշակութային և պատմական առանձնահատկությունները: Նա տեղեկացրեց, որ խոշորացումը վերաբերում է միայն համայնքների կառավարման մեթոդի փոփոխությանը և այդ գործընթացը

որևէ կերպ չի անդրադառնալու դպրոցների, մանկապարտեզների և համայնքներում գործող այլ կառույցների վրա: Մարզպետը նշեց, որ համայնքների խոշորացման ծրագրի նպատակն է համայնքի կառավարման համակարգը դարձնել առավել արդյունավետ՝ միաժամանակ իրականացնելով ապակենտրոնացված կառավարում: Նա հավելեց նաև, որ կապված համայնքների միավորման ծրագրի հետ կան միջազգային պարտավորություններ, որոնք պարտադիր կերպով ենթակա են կատարման և կան մի շարք գրանտային ծրագրեր, որոնք նախատեսված են միայն խոշորացված համայնքների համար:

Անդրադառնալով համայնքների խոշորացման գործընթացին՝ ՏԿԵՆ տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյանը տեղեկացրեց, որ այժմ 10-ը մարզի համայնքների կեսից ավելին միավորվել է և Հայաստանի Հանրապետությունում կա 52 միավորված համայնք: Ներկայացնելով գործընթացի մանրամասները՝ նա մասնավորապես նշեց, որ առաջնորդվելով համայնքների խոշորացման հիմքում ընկած մոտեցումներով՝ մի քանի համայնք միավորվելու են դառնալով մեկը: Միավորված համայնքի բնակչությունն ընտրելու է իր համայնքի ղեկավարին և ավագանուն: Մյուս բնակավայրերում կլինի մեկ վարչական ղեկավար, ով օրենքով իրեն վերապահված իրավունքների և պարտականությունների շրջանակում կունենա մի շարք գործառույթներ, այդ թվում՝ ձայնի իրավունք՝ միավորված համայնքի ավագանու նիստում: Կմեծացվեն նաև վարչական շրջանների ղեկավարների լիազորությունները, որի արդյունքում առավել կհեշտանան ազգաբնակչության համար մի շարք հարցերի լուծումները:

Կապված համայնքների միավորումների հետ իրենց առաջարկութուններով և որոշակի դիրքորոշումներով ելույթ ունեցան Դալարիկ, Լեռնագոգ, Բաղրամյան. Քարակերտ, Շենիկ, Արտամետ, Արգինա, Սարդարապատ, Ապագա, Լուսագյուղ համայնքների ղեկավարները՝ որոնք հիմնականում վերաբերում էին համայնքների սահմանակից լինելուն, ենթակառուցվածքներին, հողային խնդիրներին, ճանապարհներին, ինչպես նաև ազգաբնակչության անձնական շահերը նկատի ունալուն:

Ամփոփելով խորհրդակցությունը ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը նշեց,որ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ծրագրի շրջանակներում բոլոր համայնքներում իրականցվելու են հանրային լսումներ և հանդիպումներ ազգաբնակչության հետ, որի ընթացքում ոլորտի

պատասխանատուները բնակիչներին կներկայացնեն մյուս մարզերում իրականացված միավորման ծրագրերի արդյունքները, կպարզաբանեն նրանց հուզող հարցերը:

Օրակարգային հարցի քննարկման ավարտմամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

8/12/2019

X

VERIFIED OCSP 8/12/2019 16:12:24 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Արձ՝ Մ.Առուշանյան

Միավորվող համայնքների նախնական տարբերակների ներկայացում

	Մարզի անվանումը	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Բնակչության թվաքանակը
11:30		*Բաղրամյան*	Բաղրամյան	1071
			Դալարիկ	4410
			Լեռնագոգ	2349
			Քարակերտ	4908
		Ընդամենը՝ Բաղրամյան	*4*	*12738*
12:00		*Վանանդ*	Արտամետ	259
			Արգինա	669
			Արևադաշտ	384
			Բագարան	715
			Երվանդաշատ	785
			Շենիկ	1083
			Վանանդ	1055
			Տալվորիկ	182
			Հուշակերտ	1024
		Ընդամենը՝ Վանանդ	*9*	*6156*
12:30		*Ալաշկերտ*	Մրգաշատ	6479
			Ալաշկերտ	2128
			Արևիկ	3096
		Ընդամենը՝ Ալաշկերտ	*3*	*11703*
13:00		*Նոր Կեսարիա*	Նալբանդյան	4720
			Բերքաշատ	622
			Գետաշեն	2662
			Նոր Կեսարիա	1682
			Շենավան	1644
		Ընդամենը՝ Նոր Կեսարիա	*5*	*11330*
13:30		*Բամբակաշատ*	Բամբակաշատ	3489
			Ջրաշեն	936
			Նոր Արտագերս	1669
			Նոր Արմավիր	2009
			Ամասիա	1205
		Ընդամենը՝ Բամբակաշատ	*5*	*9308*
14:00		*Սարդարապատ*	Սարդարապատ	6299
			Այգեվան	1676
			Արաքս	2139
			Լենուղի	1727
		Ընդամենը՝ Սարդարապատ	*4*	*11841*

14:30		***Եղեգնուտ***	Զարթոնք	2655
			Արտաշար	1438
			Եղեգնուտ	2227
			Երասխահուն	2189
		Ընդամենը՝ Եղեգնուտ	***4***	***8509***
15:00		***Առատաշեն***	Առատաշեն	3059
			Ակնալիճ	3296
			Արտիմետ	2198
			Գրիբոյեդով	2028
			Տարոնիկ	2283
			Խորոնք	2968
		Ընդամենը՝ Առատաշեն	***6***	***15832***
15:30		***Ջրառատ***	Ապագա	1980
			Լուսագյուղ	1067
			Ջրառատ	3170
			Ջրարբի	1741
		Ընդամենը՝ Ջրառատ	***4***	***7958***
16:00		***Մուսալեռ***	Արևաշատ	2300
			Մուսալեռ	3166
			Ոսկեհատ	3431
			Պտղունք	2106
			Փարաքար	10048
		Ընդամենը՝ Մուսալեռ	***5***	***21051***
16:30		***Արշալույս***	Արշալույս	1035
			Գեղակերտ	3165
			Ծաղկունք	1347
			Ծիածան	1340
			Հայթաղ	3077
			Հովտամեջ	1494
		Ընդամենը՝ Արշալույս	***6***	***11458***
17:00		***Արագած***	Արագած	2852
			Աղավնատուն	3697
			Դողս	1505
			Ծաղկալանջ	1774
			Լեռնամերձ	520
		Ընդամենը՝ Արագած	***5***	***10348***